
ჩიკლეტა N4

საქავეჯიხის
2015წ.

საყაყაიხი სერიონი



www.civics.ge www.Initiatives.ge www.civicsnet.ge

facebook/ახალციხის ახალგაზრდული ცენტრი www.akhaltsikheyouthcenter.wordpress.com

ზრათარსკიოქის აყათრასოქად ს თოქად ზ სქიასეჯიხის ზრითასაროქის სენსორისი «ქაოქაქეჯიხის კრეოქის ზ. მანსკაქარძენის ქერაყათრასოქის ბრადეი» ზრეანსკინეროქ, ირე ირსკანანოქ ზ PH International ამერეიქის კადმასკერეოქის, აშს (USAID) შიჯაქეჯიხის ჟარქაქემან გორბასკიოქის ზინანსასკის აჯასკეოქიარქ: ზრათარსკიოქის მჯ ნქად სთესკეოქიონრ ზი ხანთეხანოქ ამერეიქის შიჯეჯიხის სახანგენის კათაქაროქის აყაჯოთნასკის სთესკათოქიონს ს ზი აროთახაჯოთი ამს-ი შიჯაქეჯიხის ჟარქაქემან გორბასკიოქის კამ ამს-ი კათაქაროქის მთახოთეოქიონსენრს იო იქიქერე

«Օր՝ առանց ավտոմոբիլների»

Մեմոնդերի 22-ին



ք. Ախալցխիսում Ախալցխիեի Երիտասարդական Կենտրոնի նախաձեռնությամբ, քաղաքացիական կրթության «Ապագայի Սերունդ» ծրագրի շրջանակներում Ախալցխիսի մունիցիպալիտետի մասնակից և ոչ մասնակից հանրային դպրոցների աշակերտների, կամավորների, ոչ պետական կազմակերպությունների, տեղի լրատվական միջոցների մասնակցությամբ կազմակերպեց ակցիա՝ «օր առանց ավտոմոբիլների»:
«Շատ հետաքրքիր օր է: Այս օրը նշվում է ամբողջ աշխարհում: Ակցիայի նպատակն է մարդկանց մտածել տալ ավտոմոբիլների նեգատիվ ազդեցության և ավտերնատիվ վառելիքի օգտագործման մասին: Ես այսօր

այս ակցիայի մասնակից եմ և քաղաքացիներին կոչ եմ անում տեղաշարժվել երկանիվ կամ հասարակական տրանսպորտով», - ասում է հ/կ Դեմոկրատ մեսիների միության ներկայացուցիչ Ջաբա Նաթենաձեն,: «Օր առանց ավտոմոբիլների» երթը սկսվեց օրվա երկրորդ կեսին, ժամը 15:00-ին կայարանի մերձակա տարածքից դեպի կենտրոնական զբոսայգի, բնակչությանը կոչ էինք անում գոնե այս օրը շարժվել առանց մեքենաների: Նրանք ովքեր ոտքով չէին ի նշան սովորության թույլ տվեցին մեզ իրենց մեքենաներին կապել կանաց ժապավեններ,- ասում է մասնավոր դպրոցի 9-րդ դասարանի սան Լեվան Միշինը: Տեղի լրատվական միջոցների ծառայությունից օգտվելով Ախալցխիսի Երիտասարդական Կենտրոնը մեկ շաբաթ առաջ տեղեկություն էր տարածել նշված օրվա վերաբերյալ: Այդ իսկ պարճառով ակցիային միացան տեղի լ/մ «9-րդ ալիքը», մարզային թերթ «Հարավային դարպասը», հ/կ « դեմոկրատ մեսիների միությունը», Ախալցխիսի N6 և N1 հանրային դպրոցների շրջանավարտները և Ախալցխիսի բնակչությունը: Աշակերտները վերոհիշյալ ակցիայի շրջանակներում համագործակցեցին տեղի ինքնակառավարման մարմինների հետ, ձայնագրեցին հարցազրույցներ:



Քաղաքացիական կրթության մանկավարժներին հավաստագրեր հանձնեցին



Նինոծմինդայի և Ախալքալաքի մունիցիպալիտետների Ռեսուրս Կենտրոնների հետ համագործակցելով քաղաքացիական կրթության «Ապագայի սերունդ» ծրագրի մասնակից դպրոցների մանկավարժներին հավաստագրեր հանձնվեցին,

«Խորհրդատվությունների և թրեյնինգների

կենտրոն»-ում անցկացրած թրեյնինգների ցիկլը հաջողությամբ ավարտելով կապակցությամբ: Սամցխե-Ջավախքում 42 դպրոցների քաղաքացիական կրթության մանկավարժներ են վերապատրաստվել: Մանկավարժները լրացրեցին նաև էլեկտրոնային հարցաթերթիկներ, որոնք վերաբերում էին վերոհիշյալ թրեյնինգների արդյունքներին և մշակված էին Ախալցխիսի Երիտասարդական Կենտրոնի և քաղաքացիական կրթության մանկավարժների ֆորումի Մ/Ջ մարզային ներկայացուցիչների կողմից:



Սոցիալական լրատվության վարժանքներ Նինոծմինդայում



Մեկտեմբերի 23-ին Նինոծմինդայի մունիցիպալիտետի հանրային դպրոցների համար Նինոծմինդայում, հ/կ «Ֆարուս»-ում անցկացվեց վարժանք սոցիալական լրատվության թեմայով: Վարժանքին ներկա էին Էշտիայի #1, Էշտիայի #2, Ջիգրաշենի և փ. Գոնդուրայի հանրային դպրոցների 9-րդ և 10-րդ դասարանների աշակերտներ և մանկավարժներ: Վարժանքի ժամանակ աշակերտները ծանոթացան սոցիալական լրատվության միջոցներին, նրա կիրառման ձևերին և սովորեցին աշխատել բլոգներում:



Աշակերտները բլոգներ գրանցեցին հետևյալ թեմաներով. Երիտասարդ կամավորը, երիտասարդ կրթողը, քաղաքացի լրագրողը, առողջ ապրելակերպի փաստաբանը, բնապաշտպանը: Հոկտեմբերի 28-ին Էշտիա գյուղի #1 հանրային դպրոցում հասակակից կրթողները վարժանք անցկացրեցին 9-10-րդ դասարանների համար: Սոցիալական լրատվության վարժանքները աշակերտներին օգնում է սովորել խնդիրներին լուծում տալ լրատվական միջոցներ կիրառելով: Պոպուլարիզացիա ցուցաբերվեց այս կայքերի նկատմամբ civics.ge-ն և initiative.ge-ն:

Խմբային և անհատական խորհրդատվություններ



«Ապագայի սերունդ» ծրագրի շրջանակներում հոկտեմբերից մինչև դեկտեմբեր Ս/Ջ զուգընկեր հանրային դպրոցներում անցկացվում էին խմբային և անհատական խորհրդատվություններ աշակերտների և ուսուցիչների հետ: Զուգընկեր կազմակերպության ներկայացուցիչները տալիս էին սպառնիչ տեղեկություններ փոքր դրամաշնորհների մրցույթի մասին և ծանոթացնում նաև այն ձևերին, որոնք անհերաժեշտ է լրացնել դրամաշնորհային հայտաձևը ներկայացնելիս:

ԻՆՆ ախտի գիտենանք մարդու իրավունքների ուսուցման համար

Ասպինձայի մունիցիպալիտետի Նաքալաքևի դպրոցի 9-րդ դասարանները «մարդու իրավունքների օրվա» կապակցությամբ միջոցառում անցկացրեցին, նրանք ներկայացրեցին իրենց գիտելիքները մարդու իրավունքների վերաբերյալ, շնորհանդեսային թեման էր՝ «Իմ իրավունքները»: Քաղաքացիական կրթության դասին նրանց տրվել էր առաջադրանք ձեռք բերել տեղեկություն մարդու իրավունքների մասին, հետագայում ստացած գիտելիքի հիման վրա նրանց մոտ կզարգանա ունակություն ընկալել իրենց դերը կյանքում և ստանձնել իր ուսերին ընկած պարտականությունները մարդու իրավունքների պաշտպանության հետ



կապված,-ասաց Նաքալաքևի քաղաքացիական կրթության մանկավարժ՝ Նանա Մադրաձեն:

«Մարդու իրավունքների մասին գիտելիքների խորացումը և տեղեկություն ձեռք բերելը շատ կարևոր էր: «Ես և իրավունքը» թեման պատրաստելիս մենք մեծերից շատ պրակտիկ խորհուրդներ ստացանք, ինչի հետ ապագայում անպայման հաշվի կնստենք և կնախատեսենք», -ասում է շնորհանդեսը ներկայացնող աշակերտներից մեկը: Միջոցառմանը ներկա էին՝ դպրոցի ադմինիստրացիան, պատմության ուսուցիչները:

Կանացի դեմ ուղղված բռնության վերացման օր



Նոյեմբերի 25-ին Ախալցխի կենտրոնական զբոսայգում անցկացվեց ակցիա «վաղաժամ ամուսնությունը բռնություն է աղջիկների դեմ» թեմայով: Կանանց դեմ ուղղված բռնության վերացման միջազգային օրը անցկացված ակցիային միացան մասնավոր դպրոց «Մզեքա»-յի 10-րդ դասարանի աշակերտները, Ախալցխի Երիտասարդական Կենտրոնի ներկայացուցիչները, հ/կ Դեմոկրատ մեսիների միության անդամները,

տեղի լրատվական միջոցներ՝ մարզային թերթ «հարավային դարպաս» և հեռուստաընկերություն «9-րդ ալիք»-ը:

Նշված ակցիայի նպատակն էր՝ անչափահաս աղջիկների դեմ իրականացված բռնության բողոքարկումը, ինչը վերաբերում է մինչ 16 տարեկան աղջիկների հետ չափահաս ամուսինների սեռական կապին: Մա քրեական հանցագործություն է, ինչի վրա պետությունը աչք է փակում: Պետք է նշել նաև, որ վաղաժամ ամուսնության հետ է կապված նաև հղիությունն ու ծննդաբերությունը, որն իր հերթին վտանգ է առաջացնում աղջիկների առողջությանն ու կյանքին:



Զբույց ապագա մասնագիտության մասին Էշտիայի N1 հանրային դպրոց



Նինոծմինդայի մունիցիպալիտետի Էշտիա գյուղի N1 հանրային դպրոցի քաղաքացիական կրթության ուսուցչուհի Բեռնիկ Հովսեփյանի նախաձեռնությամբ անցկացվեց հանդիպում 10-րդ դասարանի աշակերտների համար: Ընտրված թեմա էր հանդիսանում «մասնագիտություն» թեման, որի շրջանակներում աշակերտները հյուրընկալեցին համագյուղացի, ճանաչված անձնավորության պարոն՝ Սահակ Հովսեփյանին: Ինչպես նշել է քաղաքացիական կրթության

ուսուցչուհի Բեռնիկ Հովսեփյանը, հանդիպումն անցել է շատ հետաքրքիր: Անձնական ծանոթության հիման վրա նա հրավիրել էր Սահակ Հովսեփյանին, որը Իռլանդիայի Դուբլինի համալսարանի պրոֆեսոր է, ինչպես նաև Գերմանիայի ք. Մյունխենի համալսարանի ներկայացուցիչ, իսկ ծնունդով Նինոծմինդայի շրջանի Էշտիա գյուղից է: Հանդիպումը մեծ նշանակություն ունի ավարտական դասարանի աշակերտների համար, առավել ևս երբ նրանք ծանոթանում են օրինակելի մարդու հետ: 10-րդ դասարանի աշակերտները բանավեճ անցկացրեցին, որտեղ խոսվեց բարձրագույն կրթություն ստանալու կարևորության և ապագա մասնագիտության ընտրություն կատարելու մասին:

Աշակերտները հայտնեցին իրենց խորագույն շնորհակալությունը քաղաքացիական կրթության ուսուցչուհի Բեռնիկ Հովսեփյանին, որ նա հնարավորություն ընձեռնեց իրենց ծանոթանալու Իռլանդիայի Դուբլինի համալսարանի պրոֆեսոր Սահակ Հովսեփյանի հետ: Նշված հանդիպումը խթան էր հանդիսանում 10-րդ դասարանի աշակերտների համար ապագա մասնագիտություն ընտրելու հարցում քանի, որ պարոն Սահակը իր խորհուրդներով կրթությունը շարունակելու մոտիվացիան բարձրացրեց նրանց մեջ:

Մամցիւե-Ջավախեթի գուգընկեր դպրոցների մանկավարժների համար կազմակերպվեց կլոր սեղան

Նոյեմբերի 1-ին Ախալցխեում, քաղաքացիական կրթության մանկավարժների ֆորումի շրջանակներում անցկացվեց կլոր սեղան, որին մասնակցում էին քաղաքացիական կրթության ծրագիր «ապագայի սերունդ»-ին մասնակից հանրային դպրոցների 20 մանկավարժներ Մամցիւե-Ջավախեթից:



Հանդիպմանը ներկա էին նաև ոչվրացալեզու (հայալեզու) հանրային դպրոցների մանկավարժներ, այդ իսկ պաճառով հանդիպումն անցկացվեց երկու լեզուներով, թարգմանությունն ապահովում էր թարգմանչուհի Թինաթին Հակոբյանը, որին հրավիրել էր վերոհիշյալ ծրագրի գուգընկեր կազմակերպություն Ախալցխեի

Երիտասարդական Կենտրոնը: Շնորհանդեսը՝ «մանկավարժների գործունեության սկիզբը, մասնագիտական զարգացումը և կարիերային առաջընթացի սխեման» թեմայով ներկայացրեց Իվ. Ջավախշվիլու անվան Թբիլիսիի համալսարանի ասոցացված պրոֆեսոր, Եվրոպական դպրոցի մաթեմատիկայի ամբիոնի վարիչ, առաջատար ուսուցիչ՝ Պետրե Բաբիլուման:

Ներկա մանկավարժներին ծանոթացրեց սխեմայի նպատակի, սխեմայի կարգավորման ոլորտների, սխեմայով սահմանված կարգավիճակի նվաճման ճանապարհների հետ: Շնորհանդեսից հետո անցկացվեց բանավեճ, հարց-պատասխան, կոնկրետ իրավիճակի քննարկում:

«Մանկավարժները տեղեկություն ստացան նոր սխեմայի մասին, թե քանի կրեդիտ միավոր պիտի հավաքեն մանկավարժի կարգավիճակը պահպանելու համար: Պրակտիկոս ուսուցչից ավագ ուսուցչի կարգավիճակ ստանալու, պահպանելու և առաջատար ուսուցիչ դառնալու համար: Մանկավարժները տեղեկություն ստացան նաև աշխատավարձի քաղաքականության մասին: Ինքնագնահատման հարցաթերթը լրացնելիս սահմանեցին ֆասիլիտատորի և գնահատման խմբի իրավունք-պարտականությունները: Ներկայացված էր ուսուցչի լրացուցիչ աշխատանքային ենթակետերի ցուցակը, որը անպայման պիտի կատարեն կրեդիտ միավորներ հավաքելու համար»,- ասում է Ս/Ջ մանկավարժների ֆորումի կոորդինատոր՝ Նինո Նադիրաձեն:

Վրաստանի մասշտաբով բոլոր մարզերում գուգահեռ կերպով կլոր սեղան է անցկացվում քաղաքացիական կրթության մանկավարժների համար, որտեղ քաղաքացիական կրթության «ապագայի սերունդ» ծրագրի գուգընկեր հանրային դպրոցների մանկավարժներին հնարավորություն է տրվում ստանալ կարիերային աճի համար անհրաժեշտ տեղեկություն:

«Պետական կառույցները և թղթաբանությունը»



Դեկտեմբերի 8-ին Նինոծմինդայի մունիցիպալիտետի Էշտիա գյուղի N1 դպրոցի 10-րդ դասարանում անցկացվեց ինտեգրված դաս «պետական կառույցներն ու թղթաբանությունը» թեմայով, իրար էին միացվել երեք առարկաներ. Մայրենի լեզու, քաղաքացիական կրթություն, աշխարհագրություն: Դասի ժամանակ ընդգծվեց պետական լեզվի հիմնովին տիրապետելու անհրաժեշտությունը քանի, որ թղթաբանությունն իրականացվում է պետական լեզվով: Բեռնիկ Հովսեփյանը նշեց, որ աշակերտները գրավոր կերպով հաճախակի են

դիմում պետական և ոչ պետական կառույցներին, այդ իսկ պատճառով լեզվին տիրապետելու անհրաժեշտությունը առավելագույնս կա:

Հանդիպում Բորժումիի սակրեբուլոյի նախագահի հետ ՄՀՏ պատանիների հասարակության մեջ ինտեգրման նպատակով

Նոյեմբերի 15-ին ՄՀՏ պատանիների հասարակության մեջ և հասակակիցների հետ ինտեգրացիայի նպատակով, «միասին փոփոխությունների համար» (նախագծի հեղինակն է սույն դպրոցի պատմության և քաղաքացիական կրթության մանկավարժ Մայա Գուլիաշվիլին) դասարանական նախագծի շրջանակներում Իվանե Զավախիշվիլու անվան Բորժումի հանրակրթական մասնավոր դպրոցի 10-րդ դասարանի աշակերտները և ՄՀՏ անձիք հանդիպեցին սակրեբուլոյի նախագահին, պարոն Զազա Չաչանիձեին: Հանդիպումն անցավ շատ անմիջական միջավայրում: Մակրեբուլոյի նախագահն ուշադրությամբ լսեց և կիսեց երիտասարդների առաջարկությունները, նախաձեռնությունները, մտորումները և արտահայտեց հետազայում նրանց հետ համագործակցելու իր պատրաստակամությունը: Հանդիպմանը ի նկատի առնվեց աշակերտների խնամքը հասակակիցների նկատմամբ, այսինքն սահմանափակ հնարավորությունների տեր (սհտ) երիտասարդների ակտիվ մասնակցություն քաղաքացիական հասարակական պրոցեսներին, տեղի ինքնակառավարման հետ համագործակցություն, ժողովրդավարական արժեքների աջակցման և մասնակցություն միասնականորեն անցկացվելիք միջոցառումներին:



Հանդիպումից հետո աշակերտները մնացին սակրեբուլոյի նիստին: Նրանք ուշադրությամբ լսեցին օրակարգով նախատեսված 19 հարցերը և հետաքրքրությամբ աչք անցկացրեցին նիստի ընթացքին:

Այց Ազգային Ժողով

Դեկտեմբերի 9-ին Բորժումի հանրակրթական մասնավոր դպրոցի սաները գտնվում էին Քուրթախում, նրանք այցելեցին Վրաստանի Ազգային Ժողով:

«Վրաստանի Ազգային Ժողովում աշակերտներն այցելեցին լիազումար նիստերի դահլիճ, բյուրոյի սեկյակ և պառլամենտային կոմիտեաների աշխատանքային գրասենյակներ, ծանոթացան վրացական պառլամենտարիզմի պատմությանը, պառլամենտի կառուցվածքին, միսիային և դերին: Լիազումարային նիստին մասնակցելիս ազգային ժողովի նախագահը՝ Դավիթ Ուսուփաշվիլին պատգամավորներին



տեղեցակրեց աշակերտների այցի մասին, ինչին հետևեցին ծափահարությունները»,- ասում է սույն դպրոցի քաղաքացիական կրթության մանկավարժ Մայա Գուլիաշվիլին:



Այցը շարունակվեց Նիկո Բերձենիշվիլու անվան Քուրթախի պատմական թանգարանում «հետաքրքիր էր զննել երկրի մշակութային եզակի նմուշները, որոնք պահպանված են մ.թ.ա. IX-VII դարերից ի վեր մինչ ուշ միջնադար: Մենք մեր աղոթքի խոսքն ուղղեցինք տիրոջը վրացական հնագույն սրբավայրերում՝ Բագրատի և Գելաթի տաճարներում»,- ասում է դպրոցական նախագծի մասնակից Մարյամ Գելաշվիլին:

Նշված այցի նպատակն էր՝ սհտ պատանիների ինտեգրացիայի աջակցումը հասակակիցների հետ:

«Հավասարությունը-երկրի ուժն է»

Կանանց նկատմամբ ուղղված բռնության դեմ 16 օրյա արշավի (կամպանիա) շրջանակներում, Իվանե Չավախիշվիլու անվան Բորժոմի հանրակրթական մասնավոր դպրոցի քաղաքացիական ակումբի նախաձեռնությամբ (ղեկավար Մայա Գուլիաշվիլի), դեկտեմբերի 8-ին սույն դպրոցում անցկացվեց կոնֆերանս՝ հավասարությունը երկրի ուժն է թեմայով:



Միջոցառման նպատակն էր հանդիսանում՝ Սամցխե-Չավախեթի մեդիակենտրոնի հետ առկա Բորժոմի գենդերային ակումբի շնորհանդեսը. գենդերային կարծրատիպերը և այս ուղղությամբ մշակված թեմաների ներկայացումը: Կոնֆերանսի ավարտին բանավեճ անցկացվեց: Կոնֆերանսին ներկա էին՝ հայր Իոհաննես (Խեցուրիանի) Բորժոմի սբ. Իլիա մարգարեի անվան տաճարի հովիվը, Նինո Մաբաշվիլին՝ Բորժոմի և Բակուրիանի թեմի պրես-քարտուղարը, Բորժոմի մունիցիպալիտետի

սակրեբուլոյի պատգամավորներ, տիկիններ՝ Մայա Խրիկաձեն և Մարիկա Նոգաձեն, Կրթական Ռեսուրս Կենտրոնի ղեկավար՝ Իզոլդա Լոմիձեն, հոգեբան՝ Մանանա Նադիրաձեն և Ախալցխիսի Երիտասարդական Կենտրոնի ներկայացուցիչներ: Վերջիններս դպրոցական միջոցառմանն աջակցելու նպատակով հանդիսավոր միջավայրում դպրոցին հանձնեցին ֆոտոխցիկ: Կոնֆերանսին պարզևատրվեցին թեմաների պրեզենտատորներ՝ Լիզա Ղիփիանին, Գիորգի Սուլաքվելիձեն, Մարյամ Դևիձեն, Մարյամ Զեդգինիձեն, Զաուրի Խոճուլավան, Նիկոլոզ Բերիձեն, Մարյամ և Գիորգի Լոմիձենները:



Միջոցառումն ավարտեց սույն դպրոցի տնօրեն՝ տիկին Դոդո Շադուլաշվիլին, որն իր շնորհակալական խոսքն ուղղեց ներկաներին միջոցառմանն աջակցելու համար, ինչպես նաև հետագայում տարբեր միասնական միջոցառումներ իրականացնելու ցանկություն և պատրաստակամություն հայտնեց:

«Մենք պետք ենք միմյանց»

Նինոժմինդայի #4 դպրոցի 9-րդ դասարանի աշակերտուհի Աիդա Մկրտչյանը իր նախաձեռնությամբ կազմեց դպրոցական նախագիծ սահմանափակ հնարավորության տեր մարդկանց թեմայով:



Նախագծի նպատակն էր՝ աշակերտների մեջ զարգացնել ցավակցելու ունակությունը, սեփական քաղաքացիական պատասխանատվության ակտիվացումը: «Սահմանափակ հնարավորության տեր մարդկանց հետ սիրով և հարգանքով պիտի վարվենք, պիտի զգացնել տանք, որ մենք բոլորս էլ հավասար ենք և ունենք հավասար իրավունքներ», - ասում է Աիդա Մկրտչյանը:

Նախագծի շրջանակներում աշակերտների համար վարժանք անցկացվեց, որտեղ ֆասիլիտատորի դերում հանդես եկավ քաղաքացիական կրթության մանկավարժ՝ Նինո Տաբատաձեն: Մասնակիցները քննարկեցին սահմանափակ հնարավորության տեր մարդկանց իրավունքները և հասարակական այն բարիքները, որոնց կարիքն ունեն այդ մարդիկ: Մշակվեցին պլաններ հետագայում իրականացնելու նպատակով:

Մեմինար էկոլոգիական խնդիրների վերաբերյալ



Դեկտեմբերի 17-ին Նինոծմինդայի #2 հանրային դպրոցի քաղաքացիական կրթության մանկավարժն աշակերտների հետ միասին պլանավորեց և անցկացրեց սեմինար էկոլոգիական խնդիրների շուրջ: Մեմինարը վերաբերում էր էկոլոգիական վտանգներին և



դրանց լուծման ուղիներին: Մեմինարի ավարտին աշակերտները դպրոցի միջանցքում տնկեցին փշատերև ծառեր, որոնց դպրոցի բակ կտեղափոխեն գարնանը:

Թերթ առաջին քայլերը



Նինոծմինդայի մունիցիպալիտետի էշտիա գյուղի N1 դպրոցի 9-րդ և 10-րդ դասարանների աշակերտները դպրոցի քաղաքացիական կրթության մանկավարժ Բեռնիկ Հովսեփյանի աջակցությամբ երկլեզու (հայ-վրացական) դպրոցական թերթ են տպագրել «առաջին քայլեր» վերնագրով: Թերթում գրվել են այն ակտիվությունները որոնք իրականացվել են «ապագայի սերունդ» ծրագրի շրջանակներում, տեղադրել իրենց կազմած խաչքառերը: Վերոհիշյալ դասարանական թերթի պաշտոնական շնորհանդեսը կայացել է դեկտեմբերի 3-ին, որը հեռարձակել է Նինոծմինդայի մունիցիպալիտետի ռադիո „NOR“-ը:

Թերթի մշակման վրա աշխատելը նպաստում է երիտասարդներին ակտիվ մասնակցություն ցուցաբերել քաղաքացիական կյանքում և սովորած նյութը ճիշտ օգտագործել գործնականում:

Բուկլետը կազմվել է քաղաքացիական կրթության «ապագայի սերունդ» ծրագրի շրջանակներում

Ք. Ախալցիխե ախալցիխեի Երիտասարդական Կենտրոն, Կոստավա փ. 79. Հեռ. 0 (365) 22 08 77

Email: icyakhaltzikhe@yahoo.com Ծեղոց: Akhaltzikheyouthcenter.wordpress.com